# Բռնությունները շարունակվում են

## *Մարաղահար գյուղացիներն ապաստանում են Ստեփանակերտում*

Հուլիսն Արցախի համար սկսվեց նոր բռնություններով: Օմոնի եւ ներքին զորքերի ստորաբաժանումները մարզի տարբեր շրջանների գյուղերում մեծ թվով դեսանտներ են իջեցնում, միաժամանակ ուղաթիռներից կրակով սանրելով անտառները, հայ բնակիչների այնտեղ ապաստարվելու փորձերը ձախողելու համար: Տագնապալի լուրեր են գալիս բոլոր կողմերից. Գանձասարից, Հաթերքից, Առաջաձորից, Մարտակերտի մյուս գյուղերից, Մարտունու շրջանից: Հուլիսի 4-ին, զինված խմբերը մտել են Մարտունու շրջանի Ննգի գյուղը՝ անձնագրերը ստուգել եւ գնացել: Նրանց անմիջապես հաջորդեց մի նոր խմբավորում, որը նույն կերպ ստուգելով հեռացել է գյուղից: Հուլիսի 5-ին, առավոտյան ժամը 5-ին, մտել է երրորդ խմբավորումը եւ սկսել բռնությունները ու թալանը:

Խուժանի մատնված ննգեցիները փախել են Ստեփանակերտ եւ խռնվել մարզկոմի շենքի առաջ, փշալարերով շրջափակված, այսպես կոչված, փակ գոտուց ներս: Զորքը դաս կազմած սաղավարտներով, վահաններով եւ ավտոմատներով կանգնած էր կանանց եւ երեխաների դեմ, որոնք հուսահատ ճիչերով բռունցքները խփում էին վահաններին եւ ողբում: ■